ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու թիվ 10 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

Հաստատում եմ՝

Տնօրեն՝ Լ. Վարդանյան

«30» օգոստոս 2023թ.

ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

2023-2024 ՈՒՍՏԱՐԻ

6-րդ դասարան

Տաթևիկ Գաբրիելյան

2023-2024 ուստարում 6-րդ դասարանում սովորում է 30 աշակերտ՝ 20 աղջիկ, 10 տղա։ Հիմնականում ակտիվ երեխաներ են։ Դասարանում ունենք ներառական կրթության մեկ աշակերտ՝Գրիգորյան Լևոնը։

6-րդ դասարանում ձևավորված է առողջ կոլեկտիվ,որի շնորհիվ յուրաքնչյուր ոք ձգտում է իր հաջողություններով ուրախացնել կամ դժվարությունները կիսել արդեն հարազատ դարձած մարդկանց հետ։ Ընդհանուր առմամբ 6 -րդ դասարանի աշակերտները կազմակերպված են, ընկերասեր, ազնիվ, պարտաճանաչ։ Դասապրոցեսին ցուցաբերում են ակտիվություն, ունեն պատշաճ վերաբերմունք բոլորի նկատմամբ։

Դասղեկությունը բավականին աշխատատար, բարդ գործ է։ Միշտ պետք է զբաղվելերեխաների հետ, միշտ նոր սնունդ տալ նրանց ուղեղին, պատկերացմանը, հոգուն,արդյունքը երկար սպասել չի տա։

- Սիրել երեխաներին
- Երբեք չմոռանալ խրախուսել երեխաներին լավ արարքի համար
- Երբեք չհամեմատել երեխաներին
- Չունենալ սիրելիներ
- Երբեք չբողոքել երեխաներից
- Կարողանալ ներել
- Կարողանալ օգնել
- Կարողանալ համբերել և սպասել
- Կարողանալ հետաքրքիր մարդ լինել
- Կարողանալ սիրով պահանջել և սիրել պահանջելով
- Կարողանալ յուրաքանչյուրի համար բարի խոսքեր գտնել
- Կարողանալ ընդհանուր լեզու գտնել ուսուցիչների և ծնողների հետ
- Կարողանալ ցանկացած աշխատանք կատարել երեխաների հետ
- Յուրաքանչյուր երեխայի մոտ գտնել կարևոր որակներ և ջանալ զարգացնել դրանք
- Ամեն ինչ հորինել նրանց հետ միասին, այլ ոչ թե նրանց փոխարեն
- Սովորեցնել երեխաներին բարություն, պատասխանատվություն, հարգանք իրենց և մյուսների նկատմամբ

Աշխատանք ծնողական խորհրդի հետ

N	Անցկացման օրը, ամիսը, տարեթիվը	Օրակարգի քննարկվող հարցերը	Նշումներ
1.	07.09.2022թ.	1.2023-2024 ուստարվա անելիքները, ընթացիկ խնդիրները, կազմակերպչական հարցերը։ 2.Ծանոթություն նոր առարկաներ դասավանդող ուսուցիչների հետ։ 3.Դպրոց-ընտանիք կապի ամրապնդում։ Ծնողը երեխայի առաջին և ամենակարևոր ուսուցիչն է։ Ոչ մի հակասություն չի կարող լինել դպրոցի և ընտանիքի միջև, եթե ծնողներն ու դպրոցը հաջողությամբ համագործակցում են։	Սեպտեմբեր
2.		Կրթության դերն ու նշանակությունը։ Առաջադիմության հետ կապված հարցերի քննարկում։ .Ուսումնադաստիարակչական խնդիրների վերլուծություն։ Ծնողները պետք է գիտակցեն, որ հասարակության մտավոր ներուժն այն գրավականն է, որն ապահովում է ինչպես պետության հզորությունը,այնպես էլ յուրաքանչյուր քաղաքացու և ընտանիքի բարեկեցությունը։	Նոյեմբեր
		Էքսկուրսիաների և կինոդիտումների կազմակերպում։	
3.		2023-2024 ուստարվա առաջին կիսակյակի ամփոփում։ Կազմակերպչական հարցեր։ Երկրորդ կիսակյակում իրականացվելիք աշխատանքների քննարկում։ Կազմակերպչական հարցեր։	Հունվար
4.		Ուսումնադաստիարակչական խնդիրների վերլուծություն։ Առաջադիմության բարձրացմանն ուղղված աշխատանքների քննարկում։ Կազմակերպչակա հարցեր։	Մարտ
5.		2023-2024 ուստարվա արդյունքների ամփոփում։	Մայիս

ԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ

ՆԱԽԱԳԱՀ՝

Քրիստինե Գրիգորյան

ԱՆԴԱՄՆԵՐ՝ 1.Լուսինե Մեսրոպյան

2. Ռոզա Մարտիրոսյան

3. Արմինե Միքայելյան

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Հ/h	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Պատասխանատու անձ	Նշումներ
1.	Կազմել դասարանի քարտ-բնութագիրը:	Սեպտեմբեր-	Դասղեկ	
		Դեկտեմբեր		
2.	Հրավիրել ծնողական ժողովներ:	Ընթացքում	Դասղեկ	
3.	Կատարել աշակերտների ամենօրյա հաշվառում և իրականացնել վերահսկողություն հաճախումների հետ կապված: Աշխատանք տանել կարգապահական խնդիրներ ունեցող սովորողների հետ(անհարգելի բացակայություններ,ուշացումներ և այլն):Յուրաքանչյուր շաբաթվա վերջին արդյունքները քննարկել փոխտնօրենի և ծնողների հետ:	Ամենօրյա	Դասղեկ	
4.	Սահմանել աշակերտական հերթապահություն՝ հետելու դասասենյակի մաքրությանը՝ անհատական պատասխանատվություն բարձրացնելու նպատակով:	Ամենօրյա		
5.	Աշխատանք աշակերտների հետ • դաստիարակչական աշխատանք կատարել դասարանում սովորողների շրջանում՝սերտորեն համագործակցելով մյուս մանկավարժների հետ:	Պարբերաբար	Դասղեկ, ուսուցչի օգնական	
6.	Սոցիալապես անապահով երեխաներ • ընտանիքի սոցիալական կարգավիճակի մասին տեղեկություններ հավքել • հնարավորության դեպքում կազմակերպել օգնություն դպրոցի և ծնողական խորհրդի կողմից:	Պարբերաբար	Դասղեկ	
7.	Ուսման մեջ հետ մնացող աշակերտներ • անհրաժեշտության դեպքում կազմակերպել ուսումնական օգնություն(լրացուցիչ աշխատանք դասերից հետո,աջակցություն համադասարանցիների կողմից):	Պարբերաբար	Դասղեկ	
8.	Առողջական և հոգեբանական խնդիրներ ունեցող աշակերտներ • հավաքագրել առողջական խնդիրներ ունեցող աշակերտների տվյալները • մշտապես կապ պահպանել դպրոցի բուժքրոջ և ֆիզկուլտուրայի ուսուցչի հետ • աշխատանք տանել ԿԱՊԿՈՒ սովորողների հետ	Պարբերաբար	Դասղեկ Հոգեբան	
9.	• Կատարել դասալսումներ	Պարբերաբար		

ԿՐԹԱԿԱՆ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ուսումնական տարվա ընթացքում պետք է իրականացվի հայեցի,գեղագիտական, բարոյական, հայրենասիրական, սպորտային, քաղաքացիական դաստիարակությանը նպատակաուղղված միջոցառումներ, բաց դասեր, սպորտլանդիաներ, էքսկուրսիաներ աշակերտների հայացքների, մոտեցումների բացահայտման ուղղությամբ քայլեր:Կարևորագույն միջոցը դասապրոցեսն է, որի ընթացքում երեխաներին տրվում են գիտելիքներ, կարողություններ և հմտություններ, ինքնուրույնության նախաձեռնում, հանդուրժողականության արտահայտում:

Հոգևոր դաստիարակությունը սկսվում է հայրենիքի հանդեպ սիրուց: Հայրենքը սկսվում է տնից, հողից, ջրից: Հայեցի դաստիարակություն նշանակում է սիրել հայոց լեզուն, մեր ավանդույթներն ու սովորույթները, երգն ու պարը, մշակույթը, ազգային նվաճումները, հայտնագործությունները:

Գեղագիտական դաստիարակությունը մանկավարժների և դաստիարակողների համատեղ գործունեության գործընթաց է, որը ձևավորվում է գեղագիտական կուլտուրա: Գեղագիտական դաստիարակության զարգացմանը մեծապես նպաստում են արվեստի օջախներ այցելելը, էքսկուրսիաները և այլն:

Ռազմա-հայրնասիրական դաստիարակություն- հայրենասիությունը դա սերն է հայրենիքի, սեփական երկրի նկատմամբ: Դա հոգատարությունն է հայրենիքի հանդեպ և հանուն հայրենիքի սեփական անձի զոհողությունն է: Պետք է հարգել և սիրել մեր հայրենիքը:

Ֆիզիկական դաստիարակությունը ուղղված է սովորողների օրգանիզմի ձևաբանական ու ֆունկցիոնալ կատարելագործմանը, արտաքին միջավայրի անբարենպաստ պայմանների դեմ կայունության ձևավորմանը, հիվանդությունները կանխելուն և առողջության պահպանմանը:

Աշխատանքային դաստիարակություն նշանակում է զուգակցել սովորողների մտավոր և ֆիզիկական աշխատանքի ձևերը:Այդ իսկ պատճառով պետք է անընդհատ հարստացնել և համալրել նրանց աշխատանքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները: Բնապահպանական դաստիարակության նպատակը շրջապատող միջավայրի նկատմամբ դպրոցականների պատասխանատվության ձևավորումն է: Պետք է անձի մեջ դաստիարակել, որ բնությունը ազգային հասարակական հարստություն է,որը պետք է պահպանել խնամքով:

Դպրոց- ընտանիք կապը ձևավորվում է ծնողների և մանկավարժների համատեղ գործունեությունից: Այդ համատեղ գործունեությունը նախատեսում է երեխայի հանդեպ միասնական պահանջների մշակում:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարող
1.	Կարգապահություն, աշակերտի վերաբերմունքըուսման և ուսուցանվող առարկաների նկատմամբ		դասղեկ
2.	Ճանապարհային երթևեկության կանոնների կարևորությունը մեր կյանքում		դասղեկ ֆիզկուլտ. ուսուցիչ
3.	Ճշմարտություն և խաբեբայություն		դասղեկ
4.	Համարձակություն		դասղեկ
5.	Ընտրում են աշակերտները		դասղեկ
6.	Իմ սիրելի հերոսը		դասղեկ
7.	Բարեկամությունը սկսվում է ժպիտից Ժպիտը մարդու կյանքում		դասղեկ
8.	Իմ տունը իմ հայրենիքն է		դասղեկ
9.	Ընտրում են աշակերտները		դասղեկ զինղեկ
10.	Ե՞րբ է աշխարհում հայտնվել առաջին թերթը		դասղեկ
11.	Հայկական ազգային երգ ու պար Ընտրում են աշակերտները		դասղեկ
12.	Կարելի է և չի կարելի		դասղեկ
13.	Ինչ է կոնֆլիկտը, դրա լուծման եղանակները		դասղեկ հոգեբան
14.	Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության համակարգը,խնդիրները		դասղեկ զինղեկ
15.	Ընտրում են աշակերտները		դասղեկ երգի ուսուցիչ
16.	Եթե կախարդական փայտիկ ունենայի/Ամանորին ընդառաջ/		դասղեկ
17.	Հաղթում է նա, ով չի հանձնվում		դասղեկ
18.	Մարդիկ որոնց հանդիպում եմ ամեն օր Ընտրում են աշակերտները		դասղեկ
19.	Բայց մենք հավերժ ենք մեր լեռների պես...» (աստունքի ժամ)		դասղեկ

20.	Ընտրում են աշակերտները		դասղեկ
21.	Ինչպես գեղեցիկ և ճաշակով հագնվել		դասղեկ
22.	Ի՞նչ է ընկերությունը և բարեկամությունը		դասղեկ
23.	Համագործակցություն և վստահություն		դասղեկ
24.	Գիրքը մեր կյանքում		դասղեկ
25.	Մարդկային կարողությունների պահոց		դասղեկ
26.	Հետաքրքրությունը լա՞վ հատկանիշ է թե վատ		դասղեկ
27.	Հաղթում է նա, ով չի հանձնվում		դասղեկ
28.	Ինչպես գեղեցիկ և ճաշակով հագնվել		դասղեկ
29.	Երբ մեծանամ		դասղեկ
30.	Ընտրում են աշակերտները		դասղեկ
31.	Հարգանքը մեծերի նկատմամբ		դասղեկ
32.	Գոհ եմ արդյոք ինձանից		դասղեկ
33.	Գյուղ կանգնի, գերան կոտրի		դասղեկ
34.	«Հայրենիքը մերն է, մենք՝ հայրենիքինը» դաս-միջոցառում		դասղեկ զինղեկ